

Միացեալ Ընկերութիւնն, Արհեստասիրաց Ընկերութիւնը, Ազգանուէր Հայուհեաց եւ Դպրոցասէր Հայուհեաց եւ վերջապէս բոլոր ընկերութիւններն իրարու հետ կը մրցին:

Այս ընկերութիւններէն մէկ քանին նուիրատուներ եւս հանած ըլլալով, բաժանորդագնէ գատ նուէր ալ կհաւաքէ ժողովրդէն, որ իւր լումայն չզլանար ազգօգուտ ձեռնարկութիւններու:

Յաւալի է սակայն, որ ժողովուրդն ընթերցասիրութեան մասին այնչափ եռանդ ցոյց չտար... Պ. Նորայր, որ անյողողող հաստատամտութեամբ կշարունակէ իւր բառարանին հրատարակութիւնը, այսչափ նեղութիւն չէր քաշեր, եթէ նուիրատուներ հանէր կամ եկեղեցւոյ մէջ գանձանակ պտըտցունէր ի նպաստ իւր բառարանին:

Կ'ամչնանք խոստովանելու, բայց պէտք է ըսել թէ, որ եթէ Վենետիկի կամ Վիեննայի միաբանութիւնները չլինէին՝ ազգն այսօր ոչ թէ գաղղիներէն - հայերէն, այլ միայն հայերէն մ'իսկ պիտի չունենար....:

Կեցցէ՛ սահմանադրութիւն...

6 Հոկտեմբեր

Հայկական խնդիրն դեռ կսպասէ, որ Գարատաղի եւ Յունաստանի խնդիրները լուծուին, որպէսզի կարգն իրեն գայ:

Սոյն խնդիրները գորդեան հանգոյց դարձած ըլլալով՝ կկարծուի թէ դանակը միայն պիտի կրնայ զանոնք լուծել:

Վեց տէրութիւններուն դրկած նաւատորմիդն մինչեւ այսօր օգուտ մը չունեցաւ... Տուլչինիօն դեռ Գարատաղի չյանձնուեցաւ, թէպէտ եւ թուրք լրագիրներն ամեն օր կը պօռան, թէ քանիմ' օրէն Տուլչինիօն կյանձնուի:

Ո՞վ չգիտեր, թէ թուրքերուն մէկ օրը ամիսմ'է, ամիսը տարի եւ տարին՝ դար: Երբ Թուրքիան երեք տարի պայմանաժամ խնդրէ բարենորոգման համար՝ երեք դարու մէջ հազիւ կրնայ բարենորոգման օգտակար ըլլալուն համոզուիլ:

7 Հոկտեմբեր

Քուրդերուն պարսից հողը մտնելը մտատանջութիւն կպատճառէ մեր ազգայիններուն, որք կը վախնան, թէ քիւրդերն երբ պարսից սահմաններէն հալածուին՝ չարիք չգործեն դարձեալ Հայաստանի ժողովրդեան վրայ: